

արտօնութիւններ զարգացնելու նոր հայրենիքի տուրեւտիկ վաճառականութիւնը: Եւ Շահը չխարուեցաւ իւր ակնկալութեանց մէջ: Պետութեան մենաշնորհն էր մետաքսը. որուն արտահանութիւնը արտասահմանեան շուկաներ պիտի հողային Ջուղայեցիները: Ապահով կուտաններ ձեռք բերելու համար Հրնդկաստանի եւ Եւրոպայի նաւահանգիստներու մէջ կարելոր էր բարեկամական յարաբերութեան մէջ ապրիլ Ս. Աթոռի եւ անոր միջնորդութեամբ Եւրոպական իշխանութիւններու հետ: Այս կապը կնքուեցաւ արդէն երկրին մէջ, ուր կային լատին առաքեալներ, Աւգոստինեան, Բոկոտն Կարմեղեան եւ այլ Միաբանութիւններէ: Խոջայ Նազար, որ Շահ Արասին մտերիմն էր, անձամբ կը հովանաւորէր այս սերտ եւ բարեկամական կապակցութիւնը արեւմտեանց հետ: Սկսած էր արթննալ նաեւ այն զաղափարը, թէ պէտք է Արեւմուտք, նախապատուութիւնը տալով Հոմի, հիմնել հայկական դպրանոց մը, ուր հայ մանկըտին ծանօթանար եւրոպական լեզուներուն եւ մարզուէր արեւմտեան գիտութեամբ. ծախքերը յանձն կ'առնէին հայ վաճառականները: Ի Սպահան կը յաճախէր հայ աշակերտութիւնը եւրոպական առաքեալներու դպրոցները:

Դաւիթ կաթողիկոսի գրած այս թուղթերու մասին ունէ՞ր Մելքիսեդեկ կաթողիկոս տեղեկութիւն. չգիտեմ: Բայց ծանօթ է պատմութենէն, թէ Մելքիսեդեկ կաթողիկոս երեք